«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ
“Khazer” Ecological and Cultural NGO

«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների /ներդրումների» (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին եւ փոքր քաղաքային եւ գյուղական համայնքներում»

ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՀՏԴ 338:502/504
ԳՄԴ 65.05+20.1
Հ 247

Հ 247 «ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների /ներդրումների» (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում:
ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ - Եր.:
«ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն, 2023.- 28 էջ:

Գրքույկը նվիրված է Հայաստանի փոքր քաղաքային ու գյուղական բնակավայրերում «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ու Փարիզյան համաձայնագրի դրույթների կատարման կազմակերպչական ու նորարարական ֆինանսական մեխանիզմի ստեղծմանը, որը հիմնված է մարդու բնական իրավունքի վրա ու նպատակաուղղված է կլիմայի փոփոխության մեղմմանն ու կլիմայի փոփոխությանը հարմարվելուն և միաժամանակ՝ բնակչության սոցիալ-տնտեսական զարգացմանն ու ամրապնդմանը:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար և կարող է օգտագործվել որպես ուղեցույց՝ բնակավայրերում տեղական նորարարական ֆինանսական մեխանիզմի՝ «Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների» ստեղծման համար:

ՀՏԴ 338:502/504
ԳՄԴ 65.05+20.1

ISBN 978-9939-1-1679-2
© Գաբրիելյան Արամ Հրաչյայի, 2023
© «ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն, 2023
© ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ, 2023

Գրքույկի բովանդակության միակ պատասխանատուն «Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ-ն է և պարտադիր չէ, որ արտահայտի ՄԱԶԾ տեսակետը

gef SGP The GEF Small Grants Programme 30 YEARS

«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ
"Khazer" Ecological and Cultural NGO

UNDP

«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների/ներդրումների» (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում»

ՆԱԽԱԲԱՆ

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով և Փարիզյան համաձայնագրով պարբերաբար ակնարկվում է «արդարության» սկզբունքը, որով պետք է ղեկավարվեն երկրները այդ փաստաթղթերով նախատեսված թե՛ կլիմայի փոփոխության մեղմման, թե՛ հարմարվողական գործընթացներում:

Նկատի ունենալով «Իրավունքն է կրում արդարությունը» հայտնի թեզը, անհրաժեշտ է հստակեցնել թե ինչ է հասկացվում «Իրավունք»-ի տակ և ինչու է այն գերակա: Մեր պատկերացմամբ խոսքը գնում է բնական իրավունքի մասին, որի կրողը մարդն է ու այդ իրավունքը անօտարելի է:

Մարդ բանականը բնության՝ էկոհանակարգի մաս է ու կարող է գոյություն ունենալ միայն այդ միջավայրում, ուստի պետք է օգտվի բնական էկոհամակարգի իրեն հասանելի բաժնեմասից՝ օդից, ջրից հողից, բուսական ու կենդանական աշխարհից: Դա **անհրաժեշտ է ընդունել որպես աքսիոմ**:

Այսինքն, մ**արդուն հասանելի էկոհամակարգի բաժնեմասը, որն անվանում ենք «բնական ռեսուրս»**, անհատի **բնական անօտարելի սեփականությունն է: Այն առաջանում է մարդու լույս աշխարհ գալու հետ ու վերանում՝ նրա մահվան պահին: Այն չի կարող օտարվել կամ փոխանցվել, այն ամրակցված է անհատ մարդուն՝ քաղաքացուն:**

Քաղաքացիական սեփականությունը որպես իդեալական բաժնեմաս, իր բնույթից ելնելով, **չի կարող առանձնացվել ու դուրս բերվել բոլոր քաղաքացիների ընդհանուր համատեղ սեփականությունից ու որևէ գործարքի առարկա լինել**:

Այն կրում է անձնավորված, սակայն անօտարելի բնույթ և պատկանում է քաղաքացուն ծննդյան պահից մինչ մահը:

Ակադեմիկոս **Վլադիկ Սմբաթի Ներսեսյանց**

Եթե ընդունում ենք, որ մարդը բնական միջավայրի (էկոհամակարգի) բաղադրիչ է, ապա «Կանաչ էկոնոմիկայի» աքսիոմատիկայի կիրառմամբ և էկոհամակարգային մոտեցմամբ ձևավորված բնօգտագործման սկզբունքները (նորմավորումը) հիմք են տալիս պնդելու, որ բնության ռեսուրսային բաղադրիչի նկատմամբ սեփականությունը մարդու անօտարելի քաղաքացիական սեփականություն է:

Բնական ռեսուրսների նկատմամբ ժողովրդի սեփականության իրավունքը հռչակված է ՀՀ անկախության հռչակագրով ու որպես սահմանադիր ակտ ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ: Միանգամայն բնական է, որ բնական ռեսուրսների շահագործման դիմաց վճարումները պետք է հատկացվեն այդ ռեսուրսների սեփականատերերին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և այդ գումարների միջոցով ձևավորել քաղաքացիական ներդրումային կապիտալ:

Այդ կապիտալի կառավարման համար անհրաժեշտ է ստեղծել քաղաքացիների բնական իրավունքի վրա հիմնված յուրահատուկ գործիք: Նպատակահարմար է այն ստեղծել քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևաչափով, որի շահառուները ՀՀ բոլոր քաղաքացիներն են՝ հավասար ներդրումային իրավունքներով ու հավասարաչափ անօտարելի բաժնեմասերով:

Հիմք ընդունելով վերը նշած հիմնավորումները, ՀՀ կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի N42 որոշմամբ հավանության արժանացած «Ազգային մակարդակով սահմանված նախատեսված գործողությունների/ներդրում» (Intended Nationally Determined Contributions (INDC)) փաստաթղթով, որպես ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ու Փարիզյան համաձանագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունների կատարմանը նպատակաուղղված ֆինանսական մեխանիզմ որոշվեց ստեղծել կլիմայի փոփոխության մեղմմանն ու կլիմայի փոփոխությանը հարմարվելուն ուղղված երկու բաղադրիչներից կազմված հետևյալ ֆինանսական գործիքը.

Առաջինը՝ տեղական, կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևաչափով, որը հաստատուն հիմունքներով կհամալրվի բնավճարների, էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումների՝ այդ թվում «ածխածնային» բնավճարի (Carbon Taxոq) միջոցներից,

Երկրորդը՝ արտաքին ֆինանսավորումը, որը տրամադրվում է դրամաշնորհի տեսքով ու հավելյալության սկզբունքով՝ Կանաչ կլիմայական հիմնադրամից, Կիոտոյի արձանագրության հարմարվողականության հիմնադրամից, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից, ինչպես նաև բազմակողմ ու երկկողմ ֆինանսավորման աղբյուրներից:

Հայտարարվեց, որ ձևավորվող ֆինանսական մեխանիզմը՝

ա. կստեղծի իրական ու գործուն հիմքեր հանրային - մասնավոր վստահելի համագործակցության (Public Private Partnership) հիմնման ու զարգացման համար,

բ. կապահովի ապագա սերունդների կողմից «կլիմայական ռեսուրսներից օգտվելու» իրավունքը:

Այդ համահայաստանյան հիմնադրամի ստեղծումն ու գործարկումը նախատեսվեց 2016թ.-ից, ապա՝ 2018թ.-ից, սակայն մինչ օրս ՀՀ կառավարությունը այդ հանձնառությունը չի կատարել:

Նկատի ունենալով, որ նշված հանձնառությունների զգալի մասը պետք է կատարվի տեղերում՝ քաղաքային ու գյուղական համայնքներում, ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N646-Ա որոշմամբ նախատեսվեց նման հիմնադրամներ ստեղծել նաև համայնքներում (քաղվածքը կցվում է՝ հավելված 1):

Հիմք ընդունելով վերը նշված երկու կառավարչական ակտերը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը հավանություն տվեց «Խազեր» ՀԿ-ի նախագծային հայտին ու ՄԱԶԾ/ԳԷՀ/ՓԴԾ ծրագրի ներքո հատկացրեց **«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների/ներդրումների» (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում»** անվանումով, 150 000 ԱՄՆ դոլարին համարժեք «ռազմավարական դրամաշնորհ»:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» (Intended Nationally Determined Contributions (INDC)) ֆինանսական մեխանիզմի ներդրումը միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում» ՄԱԶԾ/ԳԷՀ/ՓԴԾ ծրագրի (այսուհետ՝ ՓԴԾ նախագիծ) նպատակն է համայնքային մակարդակում ցուցադրել INDC-ի 6-րդ կետով սահմանված ֆինանսական մեխանիզմի կենսունակությունն ու հեռանկարայնությունը Հայաստանի բոլոր գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերի համար և միաժամանակ նպաստել Համահայաստանյան քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ստեղծմանը, ինչը նախատեսված է INDC-ով:

ՓԴԾ նախագծով նախատեսված է ներդրումային բաղադրիչը՝ 100 հազ. ԱՄՆ դոլարը ներդնել վերադարձելիության սխեմայով մի քանի գյուղական համայնքներում (բնակավայրերում) և դրանով փորձարկել ու ցուցադրել այդ շրջանառու ներդրումային սխեմայի կենսունակությունն ու հեռանկարայնությունը: Այսինքն, ընտրել կլիմայի փոփոխության մեղմմանը նպատակաուղղված ու համայնքի (բնակավայրի) սոցիալ-տնտեսական զարգացմանը համապատասխանող այնպիսի ներդրումային նախագծեր, որոնց իրականացումը կուղեկցվի ստեղծված համայնքային հիմնադրամներին շարունակական կարգով ներդրումների վերադարձելիությամբ: Բնականաբար այդ շրջանառու ներդրումային սխեման պետք է կիրառվի ու գործի նաև կլիմայի փոփոխությանը հարմարվելուն նպատակաուղղված ներդրումային նախագծերում:

ՓԴԾ նախագծի մեկնարկին ՀՀ մարզպետարանների միջոցով հարցումներ են ուղարկվել բոլոր գյուղական համայնքներին, տրամադրելով տեղեկատվական նյութեր ու մասնակցության հրավերներ:

Արձագանքներ են ստացվել շուրջ 30 գյուղերից, որոնց տրամադրվել են բացատրական նյութեր և առաջարկվել է ստեղծել իրենց բնակավայրի մակարդակում կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ ու այդ կառույցի կողմից ներկայացնել ներդրումային նախագծերի հայտեր: Նախաձեռնություն ցուցաբերած բոլոր դիմողներին տրամադրվել է օժանդակություն, այդ թվում նաև տեղերում կազմակերպված հանդիպումներին: Հիմնադրամների հիմնադրման ուղեցույցը կցվում է (Հավելված 2):

Ստեղծված բոլոր հիմնադրամներին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն կառավարման, ֆինանսների, հաշվետվությունների և այլ հարցերում:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կայացել մարզպետարաններում, համայնքապետարաններում (խոշորացումից հետո՝ խոշորացված համայնքապետարաններում):

Աշխատանքների համակարգման համար ստեղծվել է «Համակարգող խորհուրդ», որի կազմում ընդգրկված են ՀԿ-ների, Առևտրաարդյունաբերական պալատի, նախարարությունների ներկայացուցիչներ (ընդամենը 21 մարդ): Ստեղծվել է նաև «Ներդրումային նախագծերի նախնական գնահատման ու օժանդակության» 9 հոգուց բաղկացած փորձագիտական խումբ: Ներդրումային նախագծերի համար բոլոր գնումներն իրականացվել են 4 հոգուց բաղկացած մրցութային հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա և ՄԱԶԾ/ԳԷՀ/ՓԴԾ Ազգային համակարգողի հաստատմամբ:

Արդյունքները

ՓԴԾ նախագծի հիմնական ու կարևորագույն արդյունքն այն է, որ Հայաստանի INDC-ի ֆինանսական գործիքը՝ Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի մեխանիզմը աշխատունակ է, կիրառելի է գյուղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվելուն նպատակաուղղված սոցիալ-տնտեսական զարգացման նախագծերը հետևողականորեն ու շարունակաբար ֆինանսավորելու համար: Այդ ֆինանսական մեխանիզմը ստեղծում է իրական ու գործուն հիմքեր հանրային-մասնավոր վստահելի համագործակցություն (Public-Private Partnership) հիմնելու համար: Որպես օրինակ, Վարդաբլուր գյուղում ընթացող ներդրումային նախագծում «Ֆինինվեստ» ՍՊԸ-ն համաֆինանսավորման բաղադրիչում որպես «Հանրային-մասնավոր համագործակցություն» կատարել է փորձնական 207 ԱՄՆ դոլարի ներդրում ու այդ ներդրումի վերադարձից հետո ներդրում է կատարել Վերին Գետաշեն գյուղում նախաձեռնած նման նախագծում: Վարդաբլուրի նախագծում համաֆինանսավորման բաղադրիչը ձևավորվել է նաև գյուղացիների ու այլ անձանց կամավոր ներդրումների հաշվին:

«ԽԱԶԵՐ» ՀԿ-ի և Կոտայքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի միջև կնքվել է հուշագիր «Հանրային-մասնավոր համագործակցություն» սխեմա հիմնելու վերաբերյալ: Այնուհետև, երբ հիմնադրվեց համահայաստանյան **«ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը**, որի շահառուներն են Հայաստանի բոլոր բնակիչներն ու բնակավայրերում հիմնադրված կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամները, ձևավորվեց նաև «ՀԱՄԱՔԱՅԼ» կոնսորցիումը (Կոնսորցիումի ստեղծման համաձայնագիրը կցվում է՝ Հավելված 3):

Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամն իր բնույթով ապագա սերունդների հիմնադրամ է, քանի որ այն մշտատև հիմնադրամ է ու մարդը ծնված պահից հիմնադրամի շահառու է ու կրում է ներդրումային բնական իրավունք:

ՓԴԾ նախագծի շրջանակներում 10 գյուղերում ստեղծվել են կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային (ԿՔՇՆ) հիմնադրամներ: Ֆինանսավորվել է 11 նախագիծ (10-ը՝ ԿՔՇՆ հիմնադրամների հայտերով և մեկը՝ «Արփա» բնապահպանական հիմնադրամի հայտով):

Նշված 11 ներդրումային նախագծերից 10-ում ներդրումները իրականացվել են արևային էլեկտրակայաններ տեղադրելու ու գործարկելու տեսքով և միայն մեկը (Լճաշեն գյուղում), որպես էներգախնայողության նախագիծ, փողոցային լուսավորության համակարգում:

Բնական էկոնոմիկան սաաստիկ հանրային-մասնավոր համագործակցության միջոցով

Բնակավայրի հիդրոմասնիկ նախագծերի ներդրումային գրավչության բարձրացման նպատակով ՀՀ Կառավարությունը ՀՄՀ-ի միջոցով ստեղծել է հանրային-մասնավոր համագործակցության հարթակ, որի նպատակն է ներգրավել գործարարներ, ֆինանսական կազմակերպություններ և միջազգային կլիմայական ֆոնդերի միջոցներ՝ ՀՀ-ում կանաչ տեխնոլոգիաների ներդրումը խթանելու համար։

Արենի (24 Կվտ)

Ճոճկան (30 Կվտ)

Վարդաղբյուր (10 Կվտ)

Լուսաղբյուր (15 Կվտ)

Դավիթ Բեկ (10 Կվտ)

Մայակովսկի (10 Կվտ)

Վերին Գետաշեն (5 Կվտ)

Արևաշող (10 Կվտ)

Որպես շրջանառու ներդրումային նախագծի օրինակ՝ փողոցային լուսավորության էներգախնայողության նախագիծը (գյուղ Լճաշեն)

Փողոցային լուսավորության սովորական շիկացման լամպերը փոխարինվեցին լուսադիոդային լամպերով, ինչը հանգեցրեց էներգիայի սպառման 70% կրճատման:

Փաստորեն, **գյուղի բոլոր բնակիչներին պատկանող «Լճաշեն» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը էներգախնայողության ծառայություն է մատուցում համայնքապետարանին:** Համայնքի ղեկավարությունը էներգախնայողությունից ստացած եկամուտները կանոնավոր (ամսական կտրվածքով) փոխանցում է հիմնադրամին այդ ծառայության դիմաց՝ մինչև ամբողջ ներդրումների վերադարձը հիմնադրամին: Այնուհետև լուսադիոդային լամպերը կփոխանցվեն համայնքապետարանին սեփականության իրավունքով:

ՓԴԾ նախագծի («Խազեր» ՀԿ-ի) ներդրումը կազմում է 7 150 000 դրամ (14,864.86 ԱՄՆ դոլար), որն ըստ հաշվարկների պետք է վերադարձվի 5 տարվա ընթացքում: 2020 թվականի հունվարից մինչև 2021 թվականի վերջը հիմնադրամին փոխանցվել է 3 443 000 դրամ (7,158.00 ԱՄՆ դոլար):

Համայնքապետարանի բյուջեից համաֆինանսավորումը կազմել է 4 400 000 դրամ (9,147.60 ԱՄՆ դոլար):

Այժմ այդ գումարը տեղադրված է ՀՀ պետական պարտատոմսերում 11% տարեկան շահութաբերությամբ, որն ուղղվում է հիմնադրամի կապիտալիզացիային ու միաժամանակ քննարկվում է հնարավոր (նախընտրելի) երկրորդ նախագիծը, որը կֆինանսավորվի հիմնադրամին վերադարձած գումարից և այդպես շարունակ:

Մնացած ծրագրերի մասով համապատասխան տեղեկատվությունը տես Հավելված 4-ում:

Կարևոր է նշել, որ մյուս 10 գյուղերում իրականացված ներդրումային նախագծերի՝ արևային էլեկտրակայանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ՓԴԾ նախագծի առանցքային նպատակն է փորձարկել INDC-ով նախատեսված նորարարական ֆինանսական մեխանիզմի ներդրման կազմակերպչական բաղադրիչը, այն է՝ բնակավայրի մակարդակում ձևավորել այդ բնակավայրի շահառու բնակիչների ներգրավման ու մասնակցության համակարգ, որի արդյունավետությունը կլինի պարզ, տեսանելի, հասկանալի և հասանելի: Այդ առումով կարևոր էր ընտրել այնպիսի առաջնեկային ցուցադրական (պիլոտային) նախագծի տարբերակ, որն առավելագույնս կծառայեր այդ նպատակին ու թույլ կտար բացահայտել թույլ կողմերն ու ռիսկերը: Արևային էլեկտրակայանի օրինակը դրա լավագույն տարբերակն է, քանի որ դրա գործարկման տեխնոլոգիան թույլ է տալիս հեշտությամբ իրականացնել էլեկտրաէներգիայի արտադրության ու ՀԷՑ-ին փոխանցման մշտադիտարկում, տվյալների պահպանում, ֆինանսական հոսքերի հսկում, ջերմոցային գազերի արտանետումների («ածխածնային հետքի») կրճատման ճշգրիտ գրանցում և այլն: Դա հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնել ԿՔՇՆ հիմնադրամի նորարարական բնույթի, կառավարման խնդիրների ու առանձնահատկությունների և դրա կատարելագործման, ինչպես նաև այլ համագործակցող կողմերի հետ հարաբերությունների ձևավորման վրա:

Շահառու բնակիչների օգուտները

Բոլոր բնակավայրերում ստեղծված ԿՔՇՆ հիմնադրամներն ու իրականացվող ծրագրերը ուղղակի ու անուղղակի դրական ազդեցություն ունեն բնակիչների վրա, մասնավորապես,

► Բնակիչները ձեռք են բերում ընդհանուր, սակայն միաժամանակ հավասար բաժնեմասերով ներդրումային կապիտալ:

► Համայնքների «խոշորացման» ֆոնի վրա, երբ գյուղի բնակիչները, որոնք հանրային իրավունք կրող սոցիալական միավոր են, սակայն վեր են ածվել բնակավայրի բնակիչների ու կորցրել են տեղական ինքնակառավարման լծակներն ու, կարևորը, իրենց նախկին համայնքային սեփականության նկատմամբ տիրապետման իրավունքը, ԿՔՇՆ հիմնադրամը հնարավորություն է ընձեռում որոշ չափով վերականգնել բնակավայրի բնակիչների ինքնակառավարման կարողությունը և շրջանառու ներդրումային նախագծերի միջոցով ձևավորել ու բարձրացնել բնակիչներին պատկանող հիմնադրամի ֆինանսական ու գույքային կարողությունները:

Շահառու բնակիչների համար բնապահպանական և սոցիալական օգուտները երկարաժամկետ են, քանի որ ներդրումների վերադարձելիության շնորհիվ դրանք մշտատև են, իսկ շահութաբեր նախագծերի դեպքում ներդրումային կապիտալն աճելու է ու համագյուղացիների որոշմամբ կարող է նաև հավասարաչափ շահաբաժին հատկացվել բոլոր շահառու բնակիչներին:

Լճաշենի փողոցային լուսավորության էներգախնայողության նախագիծ

Իր բնույթով, ըստ որի հիմնադրամի շահառուները տվյալ բնակավայրի բոլոր բնակիչներն են, հիմնադրամի կապիտալիզացիան (օրինակ, արևային էլեկտրակայանի դեպքում) տեղի է ունենում բնական էկոհամակարգերի ծառայության (արևային ճառագայթման) հաշվին: Որպես երկարատև օգուտ մարդկանց համար տպավորիչ է այն, որ ծննդյան պահից երեխաները հիմնադրամի ներդրումային կապիտալի անօտարելի բնական իրավունքով օժտված բաժնետերեր են...

Նոր զարգացումներ, դժվարություններ/խնդիրներ

Դժվարություններ են առաջացրել համավարակը, պատերազմն ու դրա հետևանքները, ինչպես նաև համայնքների «խոշորացում»-ը:

Համաճարակի հետևանքով անհնարին դարձան այցելությունները գյուղեր ու անմիջական շփումները շահառու բնակչության հետ, որոնց մեծ մասը պատրաստ չէր նաև հեռահար հաղորդակցմանը:

Պատերազմը որպես ֆորս մաժորային իրավիճակ, իսկ հետպատերազմյան տրամադրություններն ու հեռանկարի նկատմամբ անորոշությունները հետին պլան տարան ՓԴԾ նախագծի նկատմամբ մարդկանց հետաքրքրությունը:

Սակայն, առավել մեծ խոչընդոտներ առաջացրեց «համայնքների խոշորացման» անվան տակ տեղի ունեցած տեղական ինքնակառավարման փլուզումը: Կարճաժամկետ կտրվածքում գյուղացիների շրջանակում այն առաջացրեց մտահոգություն ապագայի նկատմամբ: Ամիսներ տևած անցումային շրջանը նյարդային վիճակ էր ստեղծել հատկապես նախկին համայնքային ադմինիստրացիայի մոտ, իսկ վարչարարական խոչընդոտները անհնարին էին դարձնում առնչությունները հին ու նոր վարչական մարմինների հետ: Դժվարությունների մեծ մասը պայմանավորված էր նրանով, որ ՓԴԾ նախագծով ընթացող ու նախատեսված ներդրումային նախագծերին մասնակից էին (կամ առնչություն ունեին) համայնքապետարանները, որոնց մեծ մասը ստանձնել էր նախագծերի համաֆինանսավորման հանձնառություն:

Վերը նշված դժվարություններն ու խոչընդոտները հանգեցրել էին մարդկանց ընդհանուր աշխատունակության անկմանը:

Խոչընդոտների շարքում կարևոր է նշել նաև ՀԷՑ-ի հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում պայմանավորված էին բյուրոկրատական քաշքշուկներով: Օրինակ, Վարդաբլուր գյուղում նախաձեռնած ներդրումային նախագծի դեպքում ՀԷՑ-ի ու Գյուլագարակի խոշորացված համայնքի համայնքապետարանի միջև պայմանագրի կնքման երկուստեք ուշացումների պատճառով 2021թ.-ի օգոստոսի սկզբին տեղադրած արևային էլեկտրակայանը միացվել է ՀԷՑ-ին միայն 2022թ.-ի հունվարի 5-ին: Այդ 5 ամիսներին չարտադրած էլեկտրաէներգիան հանգեցրեց նրան, որ Վարդաբլուր ԿՔՇՆ հիմնադրամն ի դեմս իր շահառուների զրկվեց առնվազն 650 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրումային կապիտալից ու մթնոլորտ արտանետվեց 2.5 տոննա ածխաթթու գազ, որը կարող էր չարտանետվել:

Այս կարգի խոչընդոտների հաղթահարման համար կարևոր է ապահովել գործընթացների թափանցիկությունը ու կիրառել տնտեսական ներգործության միջոցներ, օրինակ, սահմանված ժամկետներն ուշացնելու դեպքում հիմնադրամին փոխհատուցել տնտեսական վնասը, իսկ ուշացումներով պայմանավորված ջերմոցային գազեր արտանետումների («ածխածնային հետքի») դիմաց՝ փոխհատուցել ածխածնային բնավճարով (Carbon Taxing), օրինակ, Եվրոպական միությունում այդ ածխածնային բնավճարի համար սահմանված մեկնարկային սակագնի չափով (55 եվրո մեկ տոննա CO_2-ի արտանետման դիմաց) և այդ գումարը ուղղել ԿՔՇՆ հիմնադրամ, ինչպես նշված է INDC-ի ֆինանսական մեխանիզմի 6-րդ կետում:

Դժվարությունների հաղթահարման ձեռնարկված գործողություններ

• Համավարակի պայմաններում աշխատանքների մեծ մասն իրականացվել է հեռավար: Աշխատանքի այդ ձևը մասնակիորեն կիրառվել է նաև հետագայում:

• Խոշորացված համայնքների մասնակցությամբ մարզպետարաններում հատուկ քննարկումներ են եղել նախկին համայնքապետերի հետ՝ հիմնադրամների կնքված պայմանագրերի կատարման (շարունակման) վերաբերյալ: Պարզաբանումներից հետո խոչընդոտների մի մասը հաղթահարվել է. Թեև օրենքի համաձայն հիմնադրամների նկատմամբ նախկին համայնքապետարանների պարտավորությունները փոխանցվել են խոշորացված համայնքապետարաններին, սակայն դեռ մեծ դժվարությամբ է կատարվում ներդրումների վերադարձը հիմնադրամներին (խոշորացված համայնքապետարանը չի զգում ու ընկալում իր պարտավորությունը համայնքի կազմում հայտնված բնակավայրի բնակիչների նկատմամբ):

• ՓԴԾ նախագծի Համակարգող խորհրդին անդամակցող ոչ պետական կառույցների (ՀԿ ների) 7 ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնադրվել է համահայաստանյան **«ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ (այսուհետ՝ «ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» ԿՔՇՆՀ):** Այդ հիմնադրամի նպատակներից մեկը բնակավայրերում ստեղծած ԿՔՇՆ հիմնադրամների գործունեությանը օժանդակելն ու համակարգելն է, ինչպես նաև այդ հիմնադրամների կարողությունների ամրապնդումն ու ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացիան:

Կա փոխհամաձայնություն, որ հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի կազմում ռոտացիայի կարգով կընդգրկվեն բնակավայրերում ստեղծված ԿՔՇՆ հիմնադրամների կառավարման մարմինների ներկայացուցիչներ:

• ՓԴԾ նախագծում ստեղծված մասնագիտական կարողությունների պահպանման և հետագա զարգացման նպատակով «Ներդրումային նախագծերի նախնական գնահատման փորձագիտական խմբի» ու Կոտայքի մարզային առևտրաարդյունաբերական պալատի առաջարկությամբ ձևավորել է նաև «ՀԱՄԱՔԱՅԼ» կոնսորցիումը, որի նպատակը «Հանրային-մասնավոր համագործակցության» (Public Private Partnership) հարթակի ձևավորումն է, որում «Հանրային» հատվածը ներկայացված կլինի քաղա-

քացիական բնակչությամբ՝ ի դեմս «ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» ԿՔՇՆՀ-ի, իսկ մասնավոր (գործարար) հատվածը՝ առևտրաարդյունաբերական մարզային պալատներով:

Վերը նշված երկու կառույցները կդառնան Հանրային-մասնավոր համագործակցության կայացման կազմակերպչական գործիքները (տես 6-րդ էջի սխեման):

Քաղված դասեր

• Շատ ցածր են բնակավայրերում ստեղծված ԿՔՇՆ հիմնադրամների կարողությունները: Անհրաժեշտ է անընդհատ աշխատել հիմնադրամների հետ, բարձրացնել կազմակերպչական կարողությունները, ներգրավելով երիտասարդությունը: Մասնագիտական կադրերի մեծ պակաս կա:

• Ցածր է բնակիչների մասնակցության ու իրազեկվածության մակարդակը, իսկ իրազեկման դեպքում էլ՝ ըմբռնումը, որ հենց իրենք են, որպես շահառու ներդրողներ, հիմնադրամի գործունեության նախաձեռնողներն ու պատվիրատուները:

• Համայնքների «խոշորացումից» հետո հիմնադրամների կարևորությունը նոր երանգներ է ստացել՝ դրանք կարող են իրենց վրա վերցնել բնակավայրերի բնակչության ինքնակառավարման որոշ տարրեր ու ընդլայնել դրանց ցանկը:

• Անհրաժեշտ է ծրագրի իրականացման արդյունքում ստացված ձեռքբերումները զարգացնել հանրային-մասնավոր համագործակցության միջավայրում՝ ներգրավելով գիտական ներուժը (իրավագետներ, սոցիոլոգներ, տնտեսագետներ, ճարտարագետեր, էկոլոգներ և այլ):

• Անհրաժեշտ է INDC-ով նախատեսված ֆինանսական մեխանիզմի ներքին բաղադրիչի՝ «Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» մշտատև համալրվող ներդրումային կապիտալի ձևավորման մեխանիզմի ներդրումը՝ հատկապես բնօգտագործման վճարների ու էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումների հաշվին: Այդ հարցում անհրաժեշտ է շարունակել ՓԴԾ նախագծով նախատեսված լոբինգը, ներգրավելով հասարակության լայն շերտերը:

Հետաքրքիր է նշել, որ մի կողմից համայնքների «խոշորացումը» լուրջ խոչընդոտներ ստեղծեց, սակայն մյուս կողմից առիթ դարձավ, որ բնակչությունը որոշ չափով հասկանա, որ ի դեմս քաղաքացիական հիմնադրամի հնարավորություն է ընձեռվում այլընտրանքային ինքնակառավարման ձևավորման համար: Հիմնադրամի գործարկումը նաև հնարավորություն է ընձեռում գյուղական մակարդակում կազմակերպչական միջոցառումներ իրականացնել թե՛ համավարակի դեմ պայքարում, թե՛ պատերազմական իրավիճակում քաղաքացիական պաշտպանությունը կազմակերպելու համար: Վերջինիս իր արտացոլումը ստացավ ՓԴԾ նախագծի վերջին փուլում կազմված ու գրանցված ԿՔՇՆ հիմնադրամների կանոնադրություններում, որոնցում տեղ գտավ արտակարգ իրավիճակներում հիմնադրամների գործունեության վերաբերյալ համապատասխան հանձնառությունը:

Այնուամենայնիվ առանցքային հարցը «բնակավայր» հասկացությանն է վերաբերում: Մարդիկ իրենց սոցիալական միավորումով միասնաբար ապրում ու գործում են՝ ասենք գյուղում, կրում են բնական իրավունքներ ու բնական պատասխանատվություն ու դրանով իսկ միասնաբար հանդիսանում են հանրային իրավունքի սուբյեկտ և միակ շահառու, այդ թվում, կլիմայի փոփոխությանը դիմակայելու ու կլիմայի փոփոխությանը հարմարվելու առումով: Մնացած ամբողջ շղթան՝ համայնքապետարան, մարզպետարան, նախարարություններ, կառավարություն, այդ շահառու մարդկանց կարիքները սպասարկող կառավարիչներ են: Դրանք շահառու չեն:

Եթե մինչ համայնքների խոշորացումը գյուղական համայնքի համայնքապետարանը քիչ թե շատ սպասարկում էր գյուղական համայնքի բնակիչներին, ապա բազմաբնակավայր համայնքների ստեղծումը, որը ուղեկցվեց նախկին գյուղական ադմինիստրացիայի վերացմամբ ու նախկին գյուղական համայնքի համայնքային սեփականության «կենտրոնացմամբ», ոչնչացրեց գյուղի մակարդակով տեղական ինքնակառավարման կարողությունների վերջին մնացորդները:

Հատկանշական է, որ խոշորացված համայնքի ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով, ինչը բացահայտորեն վկայում է, որ 100% համամասնական ընտրակարգով ձևավորվող պետության համակարգը տարածվել է ընդհուպ մինչև ներկայիս համայնքային մակարդակ:

Կառավարման համակարգի կենտրոնացման մյուս սիմպտոմատիկ փաստն այն է, որ բնակավայրին կցած խոշորացված համայնքապետարանի ներկայացուցիչը, որը խոշորացման սկզբնական փուլում կոչվում էր «վարչական ներկայացուցիչ», ներկայումս վերանվանվել է «վարչական ղեկավար»-ի, որը թեև վարչական լիազորություններ չունի, սակայն բնակչության շրջանում ներկայանում է որպես վերջիններիս ղեկավար:

Այսինքն, բնակավայրը, որտեղ բնակվում են մարդիկ, օրենքի ուժով զրկել են թե՛ տեղական ինքնակառավարման բնական իրավունքից, թե՛ նախկին համայնքային սեփականության նկատմամբ տիրապետելու իրավունքից:

Սակայն պետք է նշել, որ ինքնակառավարումը կարող է իրականացվել նաև ուղղակի: Առաջին հերթին դա բխում է մարդու բնական իրավունքի գերակայությունից: Երկրորդ հերթին՝ ՀՀ սահմանադրությունից, ըստ որի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայ-

մանագիրը գերակա է ՀՀ օրենքների նկատմամբ: Տեղական ուղղակի ինքնակառավարման դրույթը ամրագրված է «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայում, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է: Կարևոր է նշել, որ «ուղղակի ինքնակառավարման» հնարավորությունը ամրագրված էր տեղական ինքնակառավարման մասին ՀՀ նախորդ օրենքում, սակայն նոր (գործող) օրենքում այդ դրույթը չի հիշատակվում:

Օգտվելով այդ դրույթից, «Խազեր» ՀԿ-ն ՄԱՀԾ/ԳԷՀ/ՓԴԾ ծրագրի շրջանակում 10 գյուղերում օգնել ու օժանդակել է ստեղծել գյուղի անվանմամբ «կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ», որոնք կարող են ծառայել որպես ուղղակի ինքնակառավարման հաստատություններ տվյալ գյուղի բնակիչների համար: Հիմնադրամների շահառուներն են տվյալ գյուղի (բնակավայրի) բոլոր բնակիչները, որոնց առաջարկությամբ էլ ձևավորվում է հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը:

Իհարկե, այս նորարարական մոտեցումը դժվարությամբ է ընկալվում ոչ միայն բնակիչների կողմից, սակայն դրա հեռանկարայնությունը հիմնավորվում է վերը հիշատակված ՓԴԾ նախագծի արդյունքներով:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՒ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով, որ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խոցելիությունը շատ դեպքերում կրում է տարածաշրջանային ու անդրսահմանային բնույթ, անհրաժեշտ է ձևավորել անդրսահմանային համագործակցություն ոչ միայն միջպետական, այլ նաև միջհամայնքային (միջբնակավայրային) մակարդակում: Դա հատկապես տեսանելի է անդրսահմանային ջրային էկոհամակարգերի ու ջրային ռեսուրսների խոցելիության պայմաններում: Կարևոր է համագործակցության հիմքում դնել այնպիսի սկզբունքներ, որոնք ընդունելի ու շահեկան են անդրսահմանային համագործակցող կողմերի համար:

Դա էկոհամակարգային մոտեցումն է, երբ համագործակցության առանցքում դրվում է ջրային ու մերձջրային բնական էկոհամակարգի պահպանումը, իսկ սոցիալական ու տնտեսական բաղադրիչները հարմարեցվում են էկոհամակարգի պահպանման պայմաններին: Այդ մոտեցումը համապատասխանում է «կանաչ էկոնոմիկայի» աքսիոմատիկային ու գաղափարախոսությանը:

Անդրսահմանային համագործակցության մյուս նախապայմանն է կլիմայի փոփոխությանը հարմարվելուն ուղղված գործողությունների բեռի արդարացի բաշխումը համագործակցող կողմերի միջև, մասնավորապես, խոցելիության ինդեքսի կիրառման միջոցով, որի օբյեկտիվ (նաև քանակական) գնահատումը հիմք կհանդիսանա էկոհամակարգային ծառայությունների վերականգման ու պահպանման համար ռեսուրսների մոբիլիզացիայի, այդ թվում միջազգային համաֆինանսավորման համար՝ որպես գլոբալ նշանակության բաղադրիչի:

Այստեղ կարևոր է նշել «Անդրսահմանային միջհամայնքային համագործակցության մասին» Եվրոպական կոնվենցիան (European Outline Convention on Transfrontier Co-operation between Territorial Communities or Authorities), որում կան օգտակար դրույթներ այդպիսի համագործակցության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է այն: Վրաստանն ու Ադրբեջանը ևս վավերացրել են, սակայն որոշ վերապահումներով:

Մեր պատկերացմամբ առաջարկվող ֆինանսական մեխանիզմը կարող է կիրառվել Վրաստանի ու Հայաստանի բնակավայրերի միջև անդրսահմանային համագործակցության համար: Այդ նպատակով նախաձեռնվել է համագործակցություն «Խազեր» ՀԿ-ի ու Վրաստանի «Կանաչ ռեգիոններ» ՀԿ-ի միջև (համագործակցության հուշագիրը կցվում է, Հավելված 5):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՈՒ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Ստորև թեզիսների տեսքով ներկայացվում են այն հիմնական սկզբունքները, որոնք դրվելու են բնակավայրի մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության ֆինանսավորման հիմքում:

1. Խոշորացված համայնքների կազմում գտնվող բնակավայրերի բնակիչների խմբակային սուբյեկտությունը պետք է վերականգնել (վերահաստատել) որպես հանրային իրավունքի սուբյեկտների՝ իրավաբանական անձի կարգավիճակով (օրինակ, «կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» կարգավիճակով):

2. Բնակավայրի տեսակները պետք է հստակ սահմանել որպես ա/ քաղաքներ, բ/ քաղաքատիպ ավաններ, գ/ գյուղեր՝ իրենց առանձնահատկություններով (այդ առանձնահատկություններից կախված կլինի ինչպես կլիմայի փոփոխության մեղմման պոտենցիալը, այնպես էլ դրանց խոցելիության շրջանակն ու հարմարվողականության միջոցառումները):

3. Քաղաքների, քաղաքատիպ ավանների ու գյուղերի սահմանները պետք է հստակ սահմանագծվեն: Գյուղերին պետք է անժամկետ ու անհատույց օգտագործման վերադարձվեն ու ամրակցվեն իրենց նախկին համայնքային սեփականությունը հանդիսացած համայնքային հողերը (խոտհարք, արոտավայր և այլ):

4. INDC-ի 6-րդ՝ «Ֆինանսներ» կետին համապատասխան կայուն ու հե-

տևողականորեն ամրապնդվող ֆինանսական մեխանիզմի ձևավորման ու գործարկման համար առաջարկվում է 6-րդ էջում բերված «Բնական Էկոնոմիկան սպասարկող հանրային-մասնավոր համագործակցության «ՀԱՄԱՔԱՅԼ» համակարգ» սխեմային համապատասխան ՀՀ սահմանադրության 122-րդ հոդվածի ներքո ՀՀ օրենքով ստեղծել ինքնավար մարմին՝ «Համահայաստանյան կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ» (Համահայաստանյան ԿՔՇՆ հիմնադրամ): «Բնական էկոնոմիկա» հասկացության մեկնաբանությունը՝ Հավելված 6-ում:

5. Համահայաստանյան ԿՔՇՆ հիմնադրամը, սահմանված ընթացակարգով համագործակցելով ՀՀ վարչապետի 06.07.2021 N 719-Ա որոշմամբ ստեղծված «Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի» ու ՀՀ փոխվարչապետի 894-Ա 04.11.21 որոշմամբ ստեղծված ու այդ խորհուրդը սպասարկող 2-րդ՝ կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության հարցերով և 3-րդ՝ ֆինանսավորման հարցերով միջգերատեսչական մշտական աշխատանքային խմբերի հետ ու նրանց օգնությամբ, պետք է մշակի ու խորհրդին ներկայացնի ներդրումային նախագծերի փաթեթներ, որոնք ընդունվում, քննարկվում ու ներկայացվում են խորհրդի հավանությանը, կամ «առարկություն չունենալուն»:

Ներդրումային նախագծում ներառված պետք է լինեն INDC-ի 6-րդ կետում նշված միջազգային ու այլ համաֆինանսավորման բաղադրիչներն իրենց հիմնավորմամբ:

6. Նախագծի հավանությունը (կամ «առարկություն չունենալը») ստանալուց հետո ներդրումային գումարը «Համահայաստանյան ԿՔՇՆ հիմնադրամը» պետք է տրամադրի հայտատուին ներդրումային նախագծով սահմանված կարգով ու ժամկետներում՝ համապատասխան երկկողմանի ու բազմակողմանի պայմանագրերով:

7. Գումարի տրամադրման նախապայման է բնակավայրում իրականացված, կամ իրականացվող նախորդ շրջանառու ներդրումային նախագծի շրջանակում սահմանված ռեժիմով ներդրումների վերադարձելիությունը և նոր նախագծում դրա օգտագործման բաղադրիչի առկայությունը:

8. Նախագծի իրականացման ու ներդրումների վերադարձի մշտադիտարկումը իրականացնում է Համահայաստանյան ԿՔՇՆ հիմնադրամը բաց ու թափանցիկ:

Վերը նշված 8 կետերում բերված դրույթները անհրաժեշտ նախապայմաններն են բնակավայրի մակարդակում կայուն ու հետևողականորեն զարգացող ֆինանսական մեխանիզմի ձևավորման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կարճ ՔԱՂՎԱԾՔ
բնապահպանության մասով

ՀՀ կառավարության 2017թ.-ի
հունիսի 19-ի N646-Ա որոշման
Հայաստանի Հանրապետության
Կառավարության 2017-2022թթ. ծրագիր

4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Շրջակա միջավայրի պահպանության նորարարական տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ներդրման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման հայեցակարգը.

2) մինչև 2018 թվականի ավարտն ուսումնասիրել և բանակցել միջազգային կառույցների հետ՝ «Բնապահպանական միջոցառումներ՝ երկրի արտաքին պարտքի դիմաց» ֆինանսավորման մեխանիզմի ներդրման ուղղությամբ.

3) 2018-2022 թվականների ընթացքում իրագործել անհրաժեշտ քայլեր՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով նախատեսված տեխնիկական և ֆինանսական օժանդակության բոլոր խողովակներն ու մեխանիզմները, այդ թվում՝ 2017 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև Կանաչ կլիմայի հիմնադրամի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» համաձայնագրի ստորագրում.

4) 2019-2022 թվականների ընթացքում ստեղծել և գործադրել «Պետություն-մասնավոր հատված» համագործակցության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ, բնապահպանական, այդ թվում՝ համայնքային հիմնադրամների, ապահովագրական, ինչպես նաև քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ»:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ
"Khazer" Ecological and Cultural NGO

Քաղաքացիական հիմնադրամի ստեղծման խորհրդատվական ուղեցույց

Հիմնադրամի ստեղծման նախաձեռնող խումբն իրականացնում է տեղեկացման գործընթաց համայնքի (բնակավայրի) բնակիչների շրջանում այնքան ժամանակ, որքան կարիք կա հիմնադրամի ստեղծման վերաբերյալ շահառուների առնվազն մեծամասնության հավանությունը ստանալու համար:

Միաժամանակ, հանդիպումների ու զրույցների ընթացքում նախաձեռնող խումբը վեր է հանում ու գրանցում համայնքային կարիքները, կազմում ցուցակ, կատարելով նախնական վերլուծություն ու դասակարգում ըստ առաջնահերթությունների:

Ընթացքում (հարցման ընթացքում) նաև ստանում է համաձայնություն ու անհատական առաջադրումներ հիմնադրամի հիմնադիր հանդիսանալու պատրաստակամության վերաբերյալ:

(ՏԻՄ-ի ղեկավարը, իհարկե, կարող է ևս հանդես գալ որպես հիմնադիր (օրենքը չի արգելում), սակայն ցանկալի չէ, քանի որ ՏԻՄ-ը կարող է ունենալ պայմանագրային հարաբերություններ հիմնադրամի հետ ու այդ հանգամանքը կարող է կոռուպցիոն ռիսկերի առիթ տալ:)

Նախաձեռնող խմբի կողմից պատրաստած հիմնադրամի կանոնադրության նախագիծը դրվում է բաց (նաև՝ էլեկտրոնային, առցանց) քննարկման, հրավիրվում շահառուների (այսինքն, բնակավայրի բնակիչների) ընդհանուր ժողով, որի ընթացքում.

ա) ներկայացվում ու ժողովի արձանագրությամբ հաստատվում է հիմնադրամի հիմնադիրների այն ցուցակը, որը պետք է զետեղվի հիմնադրամի կանոնադրությունում,

բ) վերջնական տեսքի է բերվում կանոնադրությունն ու հրավիրվում հիմնադիրների բաց ժողով, որին կարող են մասնակցել շահառուները,

գ) հավանություն է տրվում ու հաստատվում կանոնադրությանը,

դ) նշանակվում է հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, որին հանձնարարվում է ներկայացնել կանոնադրությունը պետական գրանցման (ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր):

Պետռեգիստրում հիմնադրամի կանոնադրությունը հաստատելուց հետո, օրենքով սահմանված ժամկետում հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի միջոցով հրավիրվում է շահառուների ու հիմնադիրների ընդհանուր ժողով, որին՝

1. ազատ կամարտահայտության կարգով և առաջադրումների տեսքով ժողովին ներկա հիմնադրամի շահառուների քվեարկությամբ՝ ոչ պակաս 3/4 ձայների ներքո, հիմնադրամի հիմնադիրներին առաջարկվում է Հոգաբարձուների խորհրդի կազմը, որը հաստատում են հիմնադրամի հիմնադիրները:

2. Հոգաբարձուների խորհուրդն իր կազմից միաձայն ընտրում է հոգաբարձուների Խորհրդի նախագահ ու նախագահի առաջարկությամբ՝ քարտուղար:

3. Հոգաբարձուների Խորհրդի նախագահը հրավիրում է Հոգաբարձուների խորհրդի առաջին նիստը, որին՝

3.1. միաձայն որոշմամբ նշանակվում է հիմնադրամի տնօրեն,

3.2. հանձնարարվում է տնօրենին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր հաղորդել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ձևավորման ու նրա կազմի վերաբերյալ տեղեկություն:

«ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն
Հեռ. 53 46 52, 093 73 72 79, 091 24 00 81
Էլ. փոստ՝ info@khazer.org
Էլ կայք՝ www.khazer.org

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԲՆԱԿԱՆ ● ԷԿՈՆՈՄԻԿԱ

Կոտայքի մարզի առևտրա-արդյունաբերական պալատ

Հանրային-մասնավոր (գործարար) համագործակցության
(Public-Private Partnership) աշխատանքների համակարգման նպատակով
«ՀԱՄԱՔԱՅԼ» կոնսորցիումի հիմնադրման
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Երևան
02 սեպտեմբերի 2022թ.

Հենապյուներ

1. *Մարդը բնության մաս է և ծնվելու օրվանից օժտված է բնական ռեսուրսների իրեն հասանելի մասից օգտվելու բնական իրավունքով: Որպես բանական էակ նա նաև կրում է բնության պահպանության և իր միջավայրը անխաթար պահելու բնական պատասխանատվություն: Դրա համար նա կարող է կիրառել կանաչ էկոնոմիկայի աքսիոմատիկայից բխող էկոհամակարգային մոտեցումը, շրջանառու (циркулярная) էկոնոմիկայի գաղափարախոսությունը:*
2. *Ժողովրդավարական երկրներում իշխանության աղբյուրը ժողովուրդն է՝ հանրությունն իր բոլոր քաղաքացիական ինստիտուտներով, սոցիալմշակութային խմբերով, գործարար հատվածով: Սեփականություն կարող են կրել հանրային հատվածը ներկայացնող անհատներն ու դրանց մեծ ու փոքր սոցիալմշակութային խմբերը մասնավոր ու հանրային («քաղաքացիական») սեփականության տեսքով: Պետության ֆունկցիան սահմանափակված է բացառապես կառավարմամբ:*
3. *Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականությունը (ներառյալ սեփականության բեռը – бремя собственности) կրում է ամբողջ հանրությունը: Այդ սեփականությունը անբաժանելի և անօտարելի է ու բնականորեն փոխանցվում է ապագա սերունդներին: Այն կարող է տրվել՝ շահագործման՝ վարձակալության, վճարովի կամ անհատույց օգտագործման՝ էկոհամակարգային մոտեցմամբ շահագործելու և այլ բանական պայմաններով օգտագործելու:*

Կոնսորցիումի հիմնական նպատակներն են.

- Օժանդակել համայնքների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ էկոհամակարգային մոտեցմամբ:
- Աջակցել անդրսահմանային համագործակցությանը միջհամայնքային (միջբնակավայրային) մակարդակում:
- Նպաստել երկրի և բնակչության սոցիալական, էկոլոգիական և պարենային անվտանգության ամրապնդմանը:
- Նպաստել համայնքային կարողությունների ամրապնդմանը մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների հավաքագրման միջոցով՝ հանրության և գործարար հատվածի համագործակցությամբ:
- «Հետադարձ հայացք հանուն ապագայի» գաղափարի ու սկզբունքի ներքո ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ձևավորում:

Հանրության հատվածը ներառում է տեղական սոցիալական ու սոցիալմշակութային խմբերը, որոնք կազմում են Հայաստանի ամբողջ մշտական բնակչությունը՝ իրենց գիտական ու կրթական, առողջապահական ու բնապահպանական, արվեստագետների ու այլ գործիչների խմբերով ու տեղական զյուղական ու քաղաքային համայնքներով:

Գործարար հատվածը ներկայացնում են տնտեսական գործունեությամբ զբաղվող բոլոր գործարարները՝ անկախ սեփականության ձևից:

ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է
«ՀԱՄԱՔԱՅԼ» ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԸ

«ՀԱՄԱՔԱՅԼ» կոնսորցիումի գործարար հատվածի համակարգումը հանձնառում է ՀՀ Կոտայքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը՝ ներգրավելով մյուս պալատները:

«ՀԱՄԱՔԱՅԼ» կոնսորցիումի հանրության հատվածի համակարգումը հանձնառում է «ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը՝ ներգրավելով հանրության հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունները և բնակավայրերում ստեղծված Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամները:

Կոնսորցիումի քարտուղարությունն իրականացնում է «Բնական էկոնոմիկա» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը:

Կոնսորցիումի տեղեկատվական հարթակը www.hamaqayl.am ինտերնետային կայքն է, որը համակարգում է Կոտայքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը: Կոնսորցիումի անդամներն իրականացնում են Կոնսորցիումի նպատակների, ինչպես նաև իրենց գործունեության մասին տեղեկատվության փոխանակում և հանրայնացում:

Կոնսորցիումին կարող են միանալ նոր անդամներ: Կոնսորցիումին միացող յուրաքանչյուր կազմակերպություն ընդունում է սույն փաստաթղթի դրույթները և ստորագրում Ստանձնագիր, որով սահմանվում են Կոնսորցիումի շրջանակներում անդամ կազմակերպության հանձնառությունները:

Կոնսորցիումի աշխատանքային հիմնական ձևաչափը մասնակիցների ներկայացուցիչների ժողովն է:

Կոնսորցիումի հիմնադիրներն են.

«Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն

Կոտայքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ

«Բնական էկոնոմիկա» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿ

«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների/ներդրումների» (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում» ՄԱԶԾ/ԳԷՀ/ՓԴԾ ծրագրի ներքո իրականացվող շրջանառու ներդրումային նախագծերի ցանկը

2023թ. հունվարի 1-ի դրությամբ

- 1-ից 10 համարների տակ նշած նախագծերը արևային էլեկտրակայաններ են:
- 11 համարի տակ (Լճաշենի) նախագիծը փողոցային լուսավորության էներգախանայողության նախագիծ է:

N	Բնակավայր	Հզոր. Կվտ	Գումարը դրամով	Համաֆինանսավորումը դրամով	Հիմնադրամին վերադարձած գումարը դրամով
1	Արևաշող	10	3 304 000	7,500,000 սուբվենցիա	**440 000**
2	Լուսաղբյուր	15	4 545 000	9,000,000 սուբվենցիա	մոտ **500 000**
3	Ճոճկան	30	9 030 000	10 041 000 սուբվենցիա	մոտ **1 250 000**
4	Վարդաբլուր	10	4 003 000	3 665 000, որից 505 000-ը՝ փոխառություն 700 000 համագյուղացիների ներդրում	մոտ **410 000**
5	Արենի	24	8 400 000	15 540 000 «Արփա» Հիմնադրամի կողմից	**Նախատեսված է 2023-ի օգոստոսին**
6	Դավիթ Բեկ	10	4 050 000	2 000 000 Սյունիքի մարզպետարան	**Դեռ շահագործման չի հանձնվել**
7	Մեծ Պարնի	1.2	1 260 000	19 241 724 «Կայուն ջրային միջավայր» ՀԿ-ի ծրագիր՝ («Խազեր» ՀԿ-ն համաֆինանսավորում է)	**Տրվել է ի պահ**
8	Մայակովսկի	10	4 258 000	5 000 000 համայնքապետարան	**Նախատեսված է 2023-ի օգոստոսին**
9	Լեռնավան	10	4 306 000	3 260 000 համայնքապետարան	**Նախատեսված է 2023-ի օգոստոսին**
10	Վ.Գետաշեն	5	1 925 000	352 000 Փոխառություն անհատներից	**Նախատեսված է 2023-ի օգոստոսին**
11	Լճաշեն	-	7 150 000	4 400 000 Լճաշենի համայնքապետարան	**3 443 000** 01.01.20-ից 31.12.21 (**271 000**-ը կանխավճար)
	Ընդհանուր	125.2	**52 231 000**		

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Меморандум

о намерениях Эколого-культурной НПО «Хазер» (Армения) и НПО «Зелёные регионы» (Грузия)

о содействии трансграничному сотрудничеству между населёнными пунктами укрупнённой общины Алаверди Лорийской области Армении и соответствующими населёнными пунктами приграничной общины Марнеули области Квемо Картли Грузии

Учитывая, что :

- жители населённых пунктов укрупнённых общин Армении и Грузии являются субъектами публичного права,
- экологические проблемы и, в частности проблемы изменения климата, носят трансграничный характер, требующих совместных и согласованных усилий для их решения,
- уязвимость от изменения климата представлена широким спектром проблем, нуждающихся таким же большим спектром действий для своего решения,
- наиболее проблематичными являются трансграничные водные экосистемы, особенно реки, которые текут через государственные границы и, как правило, приводят к межгосударственному соперничеству за доступ к ресурсам этих водотоков, что крайне отрицательно сказывается на целостность водной и околоводной экосистемы,
- действенным и естественно-правовым подходом к решению этой проблемы должен быть экосистемный подход к использованию водных ресурсов, при котором обе стороны по обе стороны от государственной границы – вверх и вниз по течению реки будут придерживаться этого подхода и договорятся, имея обоюдный интерес в сохранении водной экосистемы,
- жители населённы пунктов– это реальные бенефициары - люди и их сообщества, проживающие в бассейнах этих рек и пользующиеся реальными экосистемными услугами как водной экосистемы, так и природной в целом,
- Армения и Грузия являются Сторонами Европейской Конвенции о трансграничном межобщинном сотрудничестве (European Outline Convention on Transfrontier Co-operation between Territorial Communities or Authorities).

НПО «Хазер» и НПО «Зелёные регионы» выражают намерение содействовать трансграничному сотрудничеству между населёнными пунктами укрупнённой

общины Алаверди Лорийской области Армении и соответствующими населёнными пунктами приграничной общины Марнеули области Квемо Картли Грузии по следующим направлениям:

- Согласованный трансграничный мониторинг состояния экосистемы и её отклонения от естественного состояния.
- Трансграничное согласованное нормирование водопользования (водозабора и водоотведения), способствующее сохранению экосистены.
- Введение в практику финансового механизма экосистемных услуг на уровне водопотребителей, в том числе местных сообществ, путём учреждения Климатических гражданских оборотных инвестиционных фондов, средства которых пополняются за счёт госбюджетных отчислений (из поступлений за природопользование и воздействия на окружающую среду), экосистемные услуги, в т.ч. платежи за выбросы парниковых газов (Carbon Taxing).
- В качестве инструмента для сотрудничества с государственным (правительственным) сектором пользоваться положениями и процедурами Орхусской конвенции, чётко сформировав положения о предоставлении информации, участию в принятии управленческих решений, и доступу к правосудию.
- Участие частного (делового) сектора через Торгово-промышленные палаты путём организации «Общественно-частного (делового) партнёрства» (Public Private Partnership) на основе обоюдного признания естественных частных и публичных прав субъектов этих прав – населения населённых пунктов и делового сообщества.

Эколого-культурная НПО «Хазер»

Амалия Амбарцумян

14.12.22

Президент

НПО «Зелёные регионы»

Русудан Симонидзе

14.12.22

председатель

ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԲՆԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

«Կանաչ էկոնոմիկան» տնտեսագիտական նոր մոտեցում է, ըստ որի տնտեսությունը բնական միջավայրից կախված մարդկային գործունեության ոլորտ է և կարող է գոյություն ունենալ միմիայն բնական միջավայրի սահմաններում:

«Կանաչ էկոնոմիկայի» հիմքում ընկած է երեք աքսիոմ.

► անհնարին է անվերջ ընդլայնել ու խորացնել ներգործությունը սահմանափակ տարածության մեջ,

► անհնարին է բավարարել անընդհատ աճող պահանջները ռեսուրսների սահմանափակության պայմաններում,

► Երկրի վրա ամեն ինչ փոխկապակցված է:

«Կանաչ էկոնոմիկա» գաղափարը եկել է փոխարինելու «Դարչնագույն էկոնոմիկային», որով բնորոշվում է ամբողջ աշխարհում ներկայումս հաստատված տնտեսական զարգացման մոդելը, որի հիմքում ընկած սկզբունքները հանգեցրել են բնական ռեսուրսների գերշահագործմանը, կլիմայի փոփոխությանը, կենսաբազմազանության կորստին, անապատացմանը, բնական միջավայրի աղտոտմանն ու աղբոտմանը:

Մի խումբ մասնագետներ համարում են, որ «Կանաչ էկոնոմիկա» գաղափարի ընդունումը կնպաստի «Կայուն զարգացման գաղափարախոսության» կենսագործմանը: Մյուսները գտնում են, որ «Կայուն զարգացման գաղափարախոսությունը», որը հենվում է բնապահպանական, տնտեսական ու սոցիալական «միասնականության» ու հավասարազորության վրա, ձախողվել է, չունի հեռանկարներ և պետք է մերժվի: Այն պետք է տեղը զիջի նոր՝ «Կանաչ էկոնոմիկային», որի հիմքում ընկած է բնապահպանությունը, որպես անժխտելի առանցքային պայման, իսկ տնտեսությունը և սոցիալական ոլորտները դիտարկվում են որպես ածանցյալ կամ «կախյալ» բաղադրիչներ և պետք է հարմարվեն բնական միջավայրին ու այդ միջավայրի պահպանության պահանջներին ու պայմաններին:



Կայուն զարգացում *Բնական էկոնոմիկա*

«Կանաչ էկոնոմիկայի» դրույթներն ու պայմանները հենված են **«էկոհամակարգային մոտեցման»** վրա: Դրանք միահյուսված են միմիանց հետ և մենք այն անվանում ենք **«Բնական էկոնոմիկա»**:

Էկոհամակարգային մոտեցումը սահմանվել է «Կենսաբազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակում: Այն պահանջում է բնօգտագործման բնագավառում համապատասխան գործունեության ազդեցությունը դիտարկել ոչ թե կենդանական ու բուսական առանձին տեսակների վրա, այլ դրանց համակեցության ու նրանց՝ միջավայրի հետ փոխազդեցության, փոխկապակցվածության ու միասնականության վրա:

Բնօգտագործման Էկոհամակարգային մոտեցումը պահանջում է չափավորել, կամ նորմավորել ու սահմանափակել բնօգտագործումը այնպես, որպեսզի էկոհամակարգը, չկորցնելով իր ներքին ունակությունը, իր ինքնավերականգման կարողության շնորհիվ վերականգնի իր բնական հավասարակշռությունը:

Լինի դա բնական ռեսուրսների օգտագործումը, թե բնական միջավայրի վրա ներգործությունը, էկոհամակարգային մոտեցումը պահանջում է գործ ունենալ էկոհամակարգի հետ և չափավորել գործունեությունը, հաշվի առնելով էկոհամակարգի կարողություններն ու ունակությունը:

«Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն

Հեղինակ՝ **Արամ Գաբրիելյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Նարինե Բաղդասարյան**

էլ. փոստ՝ khazerngo@gmail.com
info@khazer.org
էլ. կայք՝ www.khazer.org

ԵՐԵՎԱՆ 2023

ISBN 978-9939-1-1679-2

Գրքույկը հրատարակվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

ԵՐԵՎԱՆ 2023